Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 17th January 2021 Bulletin 03/2021

First Sunday after Nativity

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ՏԻՄՈԹԷՈՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-11

Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ մեր Փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի՝ հրամանով,

Տիմոթէոսի՝ հաւատքով հարազատ զաւակիս. շնորհք, ողորմութիւն ու խաղաղութիւն Աստուծմէ՝ մեր Հօրմէն, եւ Քրիստոս Յիսուսէ՝ մեր Տէրոջմէն:

Քեզի աղաչեցի որ Եփեսոս մնաս, երբ ես Մակեդոնիա կ'երթայի, որպէսզի պատուիրես ոմանց՝ ուրիշ կերպով չսորվեցնել, ո՛չ ալ ուշադրութիւն դարձնել առասպելներու եւ անվերջանալի ազգաբանութիւններու, որոնք կը պատճառեն վէճեր՝ փոխանակ Աստուծոյ հաճելի շինութեան, որ կ'ըլլայ հաւատքով: Իսկ պատուէրին վախճանը սէրն է՝ բխած սուրբ սիրտէ, բարի խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէ: Ասոնցմէ վրիպելով՝ ոմանք խոտորեցան փուճ խօսքերու մէջ. կ'ուզեն Օրէնքի վարդապետ ըլլալ, բայց չեն հասկնար ո՛չ ինչ որ կը խօսին, ո՛չ ալ այն բաները՝ որոնց վրայ կը պնդեն:

Սակայն գիտենք թէ Օրէնքը լաւ է, եթէ մէկը գործածէ զայն օրինաւոր կերպով, սա՛ գիտնալով թէ Օրէնքը տրուած է ո՛չ թէ արդարներուն համար, հապա՝ անօրէններուն եւ ըմբոստներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, անսուրբերուն եւ սրբապիղծներուն, հայր զարնողներուն, մայր զարնողներուն, մարդասպաններուն, պոռնկողներուն, արուագէտներուն, մարդ գողցողներուն, ստախօսներուն, երդմնազանցներուն, եւ ուրիշ որեւէ բանի համար՝ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան, համաձայն երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին՝ որ վստահուեցաւ ինծի:

The Epistle of St Paul to the 1 Timothy 1:1-11;

Paul, an apostle of Christ Jesus by the command of God our Savior and of Christ Jesus our hope,

To Timothy my true son in the faith:

Grace, mercy and peace from God the Father and Christ Jesus our Lord.

Timothy Charged to Oppose False Teachers

As I urged you when I went into Macedonia, stay there in Ephesus so that you may command certain people not to teach false doctrines any longer or to devote themselves to myths and endless genealogies. Such things promote controversial speculations rather than advancing God's work—which is by faith. The goal of this command is love, which comes from a pure heart and a good conscience and a sincere faith. Some have departed from these and have turned to meaningless talk. They want to be teachers of the law, but they do not know what they are talking about or what they so confidently affirm.

We know that the law is good if one uses it properly. We also know that the law is made not for the righteous but for lawbreakers and rebels, the ungodly and sinful, the unholy and irreligious, for those who kill their fathers or mothers, for murderers, for the sexually immoral, for those practicing homosexuality, for slave traders and liars and perjurers—and for whatever else is contrary to the sound doctrine that conforms to the gospel concerning the glory of the blessed God, which he entrusted to me.

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 2:1-11

Երրորդ օրը հարսանիք մը կար Գալիլեայի Կանա քաղաքը, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս ալ հրաւիրուեցաւ այդ հարսանիքին, նաեւ՝ իր աշակերտները: Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը ըսաւ անոր. «Գինի չունին»: Յիսուս ըսաւ անոր. «Կի՛ն, դուն ի՞նչ ունիս ինծի հետ. իմ ժամս դեռ հասած չէ»: Իր մայրը ըսաւ սպասարկուներուն. «Ի՛նչ որ ըսէ ձեզի՝ ըրէ՛ք»: Հոն վեց քարէ կարաս դրուած էր՝ Հրեաներուն մաքրուելու սովորութեան համաձայն. իւրաքանչիւրը կը պարունակէր երկու կամ երեք մար: Յիսուս ըսաւ անոնց. «Լեցուցէ՛ք այդ կարասները ջուրով». ու լեցուցին զանոնք՝ մինչեւ բերանը: Եւ ըսաւ անոնց. «Հիմա հանեցէ՛ք ու տարէ՛ք սեղանապետին». անոնք ալ տարին: Երբ սեղանապետը համտեսեց գինի դարձած ջուրը՝ չէր գիտեր ուրկէ՛ ըլլալը (բայց սպասարկուները՝ որոնք հաներ էին ջուրը՝ գիտէին): Սեղանապետը կանչեց փեսան եւ ըսաւ անոր. «Ամէն մարդ նախ կը մատուցանէ լաւ գինին, ու երբ արբեցած ըլլան՝ ա՛յն ատեն ցածորակը. բայց դուն լաւ գինին պահեցիր մինչեւ հիմա»: Յիսուս իր նշաններուն սկիզբը ըրաւ ասիկա՝ Գալիլեայի Կանա քաղաքին մէջ, եւ ցոյց տուաւ իր փառքը. ու իր աշակերտները հաւատացին իրեն:

wedding in Cana

The Holy Gospel of Jesus Christ according to John 2:1-11

Jesus Changes Water Into Wine

On the third day a wedding took place at Cana in Galilee. Jesus' mother was there, and Jesus and his disciples had also been invited to the wedding. When the wine was gone, Jesus' mother said to him, "They have no more wine."

"Woman, [a] why do you involve me?" Jesus replied. "My hour has not yet come."

His mother said to the servants, "Do whatever he tells you."

Nearby stood six stone water jars, the kind used by the Jews for ceremonial washing, each holding from twenty to thirty gallons. [b]

Jesus said to the servants, "Fill the jars with water"; so they filled them to the brim.

Then he told them, "Now draw some out and take it to the master of the banquet."

They did so, and the master of the banquet tasted the water that had been turned into wine. He did not realize where it had come from, though the servants who had drawn the water knew. Then he called the bridegroom aside and said, "Everyone brings out the choice wine first and then the cheaper wine after the guests have had too much to drink; but you have saved the best till now."

What Jesus did here in Cana of Galilee was the first of the signs through which he revealed his glory; and his disciples believed in him.

After this he went down to Capernaum with his mother and brothers and his disciples. There they stayed for a few days.

Ս. Պետրոս հայրապետի, Ս. Վլաս եպիսկոպոսի և Ս. Աբիսողոմ սարկավագի հիշատակության օր

Ալեքսանդրիայի Ս. Պետրոս հայրապետը և Ս. Աբիսողոմ սարկավագը Ընդհանրական եկեղեցու մեծ սրբերից են: 4-րդ դարի սկզբին գլխավորելով Ալեքսանդրիայի աթոռը՝ Ս. Պետրոս հայրապետն իր հավատի արիությամբ և Ս. Աբիսողոմ սարկավագի աջակցությամբ պահպանել է հավատավոր հոտը Դիոկղետիանոս, Գաղերիոս և Մաքսիմիանոս կայսրերի հալածանքների ընթացքում: Հալածանքների սաստկացման պատճառով, համայնքի պնդմամբ հայրապետը հեռանում է Պաղեստին և Միջագետք, սակայն, լսելով քրիստոնյաների նահատակությունների մասին, շուտափույթ վերադառնում է Ալեքսանդրիա և քիչ անց բանտարկվում: Սրբի ցանկության համաձայն, նաև երկյուղելով ժողովրդի զայրույթից՝ զինվորները նրան հրապարակավ չեն գլխատում: 311 թվականին հայրապետն իր սարկավագի հետ միասին գիշերով ընդունում է նահատակության պսակը:

Եբաստիայի Ս. Վլաս եպիսկոպոսը՝ սրբակենցաղ և քաջարի հովիվը, մշտապես օրինակ է ծառայել քրիստոնյաներին և քաջալերել նահատակներին: Լիկիանոս կայսեր հալածանքների շրջանում Ս. Վլասն իր հոտին խորհուրդ է տալիս հեռանալ քաղաքից, իսկ ինքն ապաստանում է Արգեոս լեռան մենաստաններում՝ որտեղ ապրում է ճգնությամբ և աղոթական կյանքով: Հրաշագործ սրբի տեղը հայտնի է դառնում իշխանություններին, նրան բերում են ատյան, ուր նա Տիրոջ Հոգով լցված՝ հանդիմանում է հեթանոսներին, ինչի համար տանջանքների է ենթարկվում, նետվում Սեբաստիո լիճը և ապա գլխատվում 316 թվականին: Ս. Պետրոս հայրապետի, Ս. Վլաս եպիսկոպոսի և Ս. Աբիսողոմ սարկավագի վարքը և մարտիրոսությունը դարեր շարունակ օրինակելի են եղել ողջ քրիստոնյա աշխարհի համար, որովհետև, իրապես, մարտիրոսների արյան գնով հիմնադրվեց Եկեղեցին:

3: This weeks message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Դու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես» (Յովհ. 2:10):

Աստուածասէր եւ եղբայրասէր հարազատներ,

Ո՞րն է ընտիր գինին ունենալու մեր ժամանակը: Գուցէ դուք եւս ակամայ հարցնում էք դա , երբ հանդիպում էք Կանայի հարսանիքի դրուագին, երբ Քրիստոս մասնաւոր միջամտութեամբ ջուրը գինու վերածեց՝ հարսանեկան ուրախութիւնը կատարեալ դարձնելով: Փեսայի եւ իր ընտանիքի ուժերը վստահ բաւարար չէին այդքան գինի ունենալու համար՝ աղքատութեան թէ այլ կազմակերպչական թերութեան պատճառաւ: Բայց շարունակութիւնը խայտառակութիւնն էր լինելու, եթէ Աստուածամօր միջնորդութիւնը եւ Յիսուսի մասնաւոր միջամտութիւնը չլինէին:

Մի քանի ակնառու կետեր առանձնացնենք.

- Փեսան գուցէ այդքան ունեւոր չէր, որ անհրաժեշտ քանակութեան գինի նախապէս ունենար, եւ կամ սպասուածից աւելի էին հիւրերը: Բայց ունէր Ս.Մարիամի պէս բարեկամներ, որ նոյնիսկ փեսայի իմանալուց առաջ ընտանիքի հոգսն իրենը համարեց, մտահոգ եղաւ կարիքի համար:

- Միջամտեց եւ միջնորդեց Որդու մօտ եւ խնդիրը լուծուեց: Կարո՞ղ էր այդ կարիքը լեցուել առանց այս միջնորդութեան եւ առանց Քրիստոսի միջամտութեան: Գուցէ այո, բայց միայն մարդկային «***վատ գինու***» տարբերակով՝ չնայած անգամ դա չկար.

-Առաջին վկաները սպասաւորները, սեղանապետը եւ փեսան էին, բայց այս հրաշքը առաւելապէս առաքեալների համար եղաւ, որ տեսան Քրիստոսի փառքը եւ հաւատացին Նրան: Այդ հաւատքը պաշար ու զէնք է՝ մինչեւ վերջ քայլելու եւ վկայելու համար Քրիստոսին: Քրիստոնեաներս էլ պաշարն ունենք:

- Աստուածամօր կերպարի մէջ եկեղեցու մայրական խնամքն ու միջնորդութիւնը կայ: Մայրը բարեխօսում է իր Միածին զաւակի մօտ, որ Քրիստոս ներկայ եւ մասնակից դառնայ մեր կեանքին: Մայր Եկեղեցին ամէն օր իր զաւակների համար դիմում է Փրկչին ՝ հոգեւոր օրհնութեամբ եւ հրաշալի միջամտութեամբ մեր մարդկային կարիքները լցնելու:

- Քրիստոս Իր ներկայութեամբ հարսանիքին պատուեց եւ փրկեց փեսայի հեղինակութիւնը: Այս կերպ Փրկիչն ընդհանրապէս օրհնեց ամուսնութիւնը, պատուեց եւ բարձրացրեց:

- Քրիստոսով մարդկային ուրախութիւնը կատարեալ է դառնում՝ հակադրուելով այն սխալ կարծիքին, թէ քրիստոնէութիւնը խեղճերի եւ տխուրների կրօն է…

Երբ Քրիստոսի միջամտութեամբ գինու վերածուած ջուրը մատուցուեց, առաջին պահին սեղանապետը կարծեց, թէ դա փեսան մասնաւոր է արել՝ ասելով. **«Ամէն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, եւ երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը, իսկ ու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես»** (Յովհ. 2:9-10): Մարդկային չափանիշը թերի է, «***ամէն մարդ***» վատ տպաւորութիւն չթողնելու ջանք է թափում, դրա համար էլ ակամայ թէ միտումնաւոր, օգտւում է մարդկանց ուշադրութեան թուլացումից, հարբած լինելուց, արթուն մտքի թմրելուց: Ամէն մարդ «***վատ գինի***» ունի, որ մատուցելու իր ժամանակն ունի՝ ըստ մարդկային իր տրամաբանութեան, ըստ իր ընկած բնութեան: Իսկ Աստծունը միայն ընտիր, ուրախութիւնը լիակատար դարձնող «***գինի***» է: Մարդկայինի վրայ յոյս դնելու դէպքում միշտ սկիզբն ընտիր է թւում, բայց յետոյ շարունակւում է «***վատ գինով***»: Յիշենք, որ լայն է դուռը եւ շատերն են մտնում «***ամէն մարդ***» ասուածի՝ ընդհանուր պատկերացումի, մեծամասնութեան ճամփով: Նեղ դռնով՝ մարմնացած Աստծոյ ետեւից քայլողի համար է մշտական «***ընտիր գինին***»:

Գինին խաղողից է մեծաւ մասամբ: Յետաքրքիր է, որ Ս.Գրքում ազգն ու երկիրն էլ խաղողի այգու եւ հնձանի հետ են համեմատւում: Թէ նեղ՝ ազգի իմաստով, եւ թէ լայն՝ ընդհանրապէս մարդկային ազգի իմաստով, Աստուած ամէն հնարաւորը տալիս է, փչացնողը մարդն է: Ջրհեղեղով աշխարհը մաքրած Աստուած Քրիստոսի մարդեղութեամբ աշխարհը մաքրում է հոգեւորաբար: Խորհրդական ճամփորդություն է անցնում ամէն քրիստոնեայ՝ Ս. Մկրտութեամբ մաքրուելով եւ Ս. Հաղորդութեան հոգեւոր կերակուր՝ Հաց ու Գինին ընդունելով:

Ո՞ւմ համար է ընտիր գինին եւ ե՞րբ է այն տրւում. երբ որոշում ենք, որ հարազատ ենք, ազգակից ենք Քրիստոսին, երբ Իրեն մեր կեանք ենք հրաւիրում: ***«Ըստ արարչութեան՝ բոլորն էլ Աստծուց են, բայց ըստ ազգակցութեան՝ միայն նրանք ենք Աստծուց, որոնք ընդունում են Իր խօսքը, հնազանդում Իր խօսքին եւ ապացուցում են իրենց ազգակցութիւնը՝ սեփական օրինակելի կեանքով»***,- ասում է մի վանական: Արտասուքի ապաշխարութեան, Քրիստոսի ետեւից նեղ դռան ճանապարհը քայլողին, երկնային հարսանիքի Բարի Լուրի հրաւէրը ընդունածին է գալիս Սուրբ Հոգին՝ իբրեւ չսպասուած ընծայ, պարգեւ, շնորհ, իւրահատուկ խնամք:

Հոգեգալուստի օրը Սուրբ Հոգով լցուած առաքեալներին շփոթեցին գինով հարբած մարդկանց հետ: Լաւագոյն գինին Աստուած վերջում էր պահել. սուրբ Հոգու «***գինին***» լաւագոյն՝ հոգեւոր երկնային եւ հրեշտակային ուրախութեան արտայայտութիւնն է: Աստծոյ հետ լինելու ուրախութիւնը լրում ն է բոլոր ուրախութիւնների, ինչի մասին Յովհաննէսը յետոյ պիտի վկայի. ***«Ինչ որ տեսանք եւ լսեցինք, պատմում ենք ձեզ, որպէսզի դուք էլ հաղորդակից լինէք նրան մեզ հետ, ինչպէս որ մենք հաղորդութիւն ունենք Հօր հետ եւ նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի հետ:Եւ այս բանը գրում ենք ձեզ, որպէսզի ձեր ուրախութիւնը կատարեալ լինի»*** (Ա. Յովհ. 1:3-4):

Տա Աստուած, որ մենք կարողանանք ազգովի իսկապէս սրտով եւ հոգով ազգական լինենք Քրիստոսի, որ անգամ առանց մեր գիտութեան, Քրիստոս հոգա մեր կարիքները՝ մեր եկեղեցական եւ ազգային կեանքի մէջ մեր ուրախութիւնը կատարեալ դարձնելով: Նրան Հօր եւ Սուրբ Հոգու հետ փառք յաւիտեանս. ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Այլաերդեան

Commemoration of the Patriarch St. Peter, Bishop St. Vlas and Deacon Abisolom

Patriarch St. Peter of Alexandria and Deacon Abisolom are important saints of the Universal Church. At the beginning of the 4th century being the Patriarch of Alexandria, St. Peter thanks to the strength of his faith and with the support of the Deacon Abisolom led and protected his flock during the period of reign of the kings Dioclethianus, Galerius and Maximianus, who persecuted the Christians. Because of the intensification of persecutions and upon the insistence of the local community the Patriarch left for Palestine and Mesopotamia. However, becoming aware of Christians' martyrdoms, he immediately returned to Alexandria and soon he was imprisoned. By the wish of the saint, and also fearing of the people's indignation, the soldiers don't behead him publicly. The Patriarch Peter and the Deacon Abisolom were martyred in 311.

Bishop Vlas of Sebastia always gave the lead to the Christians and encouraged the martyrs. During the period of persecutions of the king Likianos Bishop Vlas advised his flock to leave Sebastia, and went to live in the monasteries on the Mountain Areos, where he lived an ascetic and prayerful life. However, authorities became aware of the place of the saint and brought him to the court, where filled with the Lord's Spirit, Bishop Vlas reproached the heathens. For his behavior he was subjected to torments, then he was thrown into the lake of Sebastia and afterwards was beheaded in 316.

The life, behavior and martyrdom of the Patriarch St. Peter, Bishop St. Vlas and Deacon Abisolom have been a model for the entire Christian world, at the price of whose blood the Christian Church was founded.

Անուն եւ առաքելություն

«**Եւ երբ ութ օրերը լրացան, եւ Նա թլփատվեց,Նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չեր հղացվել Մոր որովայնում**»: (Ղուկ. 2;21)

Հիսուս Քրիստոսի Անվանակոչության տոնը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է Փրկչի Ծննդից ութ օր հետո՝ հունվարի 13-ին:

Հրեշտակի խոսքին հավատարիմ լինելով՝ Սուրբ Աստվածածինը եւ Հովսեփը Հիսուս Քրիստոսին ութ օրականում թլփատում եւ անունը դնում են Հիսուս: Այս Անունը մարդկության համար մի նոր էջ բացեց, որպեսզի. «**Ով հավատա Նրան, չկորչի, այլ հավիտենական կյանքը ժառանգի**»: Այն նաեւ նոր կտակարանում մկրտության խորհուրդն ունի: Ըստ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հաստատած կանոնի, ութ օրականում մկրտում են նորածին մանկանը՝ Հիսուսի թլփատության խորհրդով, եւ անվանակոչում՝ Հիսուսի անվանակոչության խորհրդով: Հետեւենք մեր տիրահաստատ Եկեղեցու կանոններին եւ նորից պատվաստվենք Կյանքի Ծառին՝ Քրիստոսին, դեռ փոքրիկ հասակում մկրտության շնորհներով զարդարենք մեր երեխաներին, եւ անվանակոչենք անարատ անուններով: Մարդու անունը մեծ դեր է ունենում նրա ողջ կյանքի ընթացքում: Տիրոջ անվանակոչությամբ կարեւորվեց նաեւ մարդու անունը եւ անվան խորհրդանիշը: Դեռեւս Հին Ուխտում արդեն այդ ամենը արտացոլված էր, սակայն Տիրոջ Անվանակոչությամբ վերահաստատվեց այդ ամենը: Եւ այսօր էլ ժամանակն է, որպեսզի մենք էլ, հետեւելով Աստվածաշնչյան ավանդույթներին՝ սուրբերի աստվածադիր անունների, մեր Փրկչի անվանակոչության եւ Տիրոջ կողմից առաքյալներին նոր անուններով օժտելու փաստին, մեր զավակների անունները դնենք հենց այդ խորհրդով: Անունը մեծ ազդեցություն է ունենում մարդու ողջ կյանքի վրա: Նախակոմունիստական շրջանում մեր պապերը հենց այդպես էլ վարվում էին, սակայն կտրվեց այս սուրբ խորհրդի իսկությունը: Եթե մենք մեր զավակներին կոչենք սուրբերի անուններով, նրանք մշտապես բարեխոս կլինեն նրանց համար, եւ մեր հույսը չի կտրվի: Ամեն մարդ, որ աշխարհ է գալիս, ունենում է իր էությունը, իր մատնահետքերը, իր կյանքը եւ վերջապես՝ իր հոգեբանական կառուցվածքն ու անհատականությունը: Այս ամենից երեւում է, որ յուրաքանչյուր ծնունդ խորքում աստվածային ուղղակի միջնորդության արդյունք է: Տիրոջ անվանակոչությունը մի նոր օրհնություն է մարդկանց որդիների համար, նամանավանդ նրանց համար, ովքեր հավատարիմ են Աստծո խոսքին: Մաղթում ենք, որ այս սուրբ տոնի առթիվ, մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոս ձեզ իմաստության ու հավատքի հոգով պարուրի, որպեսզի հստակորեն զգաք Նրա ներգործող Աջի զորությունը եւ հաստատուն նվիրումով առաջնորդվեք դեպի հավիտենական կյանքի հանգրվանները: Ամեն

Աղբյուր՝ «Սյունյաց Կանթեղ» ամսաթերթ N 71

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Helen Khachikian and Robert Istepanian and their families for the soul of their Father, Father in law and Grandfather the late **VAROOJAN KRIKOR KHACHIKIAN** on the 4th anniversary of his passing, also for all the old and new deceased members of the **KHACHIKIAN** and **ISTEPANIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

Welcome: *We wish to welcome those who are visiting our church. The Parish Council would like to invite you to make St. Yeghiche Armenian Church your spiritual home. You are cordially invite you to register as parish member and take part in the Service and activities of our Church.*

Please register your name and email address with Parish Council to receive announcements from St Yeghiche Armenian church. Please provide your details to any Parish Council Member, alternatively you may send it to: info@styeghiche.org.uk

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted*:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for ***prompt*** payment of their **annual membership dues and generous donations,** thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: ***"St Yeghiche Armenian Church"***. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.